

## **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1/1**

**8 ապրիլի 2016 թ.**

Քննարկվեց Գէորգ Օգնայեանի 09.03.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.02.2016թ-ի թիվ 315417/02 որոշման դեմ:

#### **Գէորգ Օգնայեանի գանգատում բերված փաստարկները.**

Իրավաբանական վարչության 2-րդ բաժնի կողմից ուղարկված որոշումը Գէորգ Օգնայեանը ստացել է 09.03.2016թ-ին: Որոշման մեջ նշված է, որ Գէորգ Օգնայեանը հանդիսանում է «Դեպի մեր հայրենիք» ՍՊԸ տնօրենը:

Գէորգ Օգնայեանը հայտնում է, որ 22.01.2016թ-ից չի հանդիսանում «Դեպի մեր հայրենիք» ՍՊԸ տնօրենը: Այդ մասին Գէորգ Օգնայեանը հայտնել է, երբ այցելել է Էրեբունու հարկային տեսչություն՝ 10.02.2016թ. ժամը 11:00-ին գործի քննությանը մասնակցելու համար: Սակայն, նշված հանգամանքը հաշվի չի առնվել:

Ելնելով վերոգրյալից՝ Գէորգ Օգնայեանը խնդրում է վերանայել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.02.2016թ-ի թիվ 315417/02 որոշումը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը քննելով 29.02.2016թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ «Դեպի մեր հայրենիք» ՍՊԸ-ի տնօրեն Գէորգ Օգնայեանը սահմանված ժամկետում չի վճարել հարկերը: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3-րդ հոդվածով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 29.02.2016թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 315417/02 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Գէորգ Օգնայեանին վարչական պատասխանատվության ենթարկելու և 20.000 դրամի չափով տուգանելու մասին:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Որոշումը կայացվելու համար հիմք է հանդիսացել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 14.12.2015թ-ի հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին թիվ 2280/02 որոշումը, որի համաձայն 11.12.2015թ-ի դրությամբ «Դեպի մեր հայրենիք» ՍՊԸ-ի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 447.131 դրամ:

Տվյալ դեպքում Գէորգ Օգնայեանի գանգատում բերված այն պնդումը, որ նա 22.01.2016թ-ից չի հանդիսանում «Դեպի մեր հայրենիք» ՍՊԸ-ի տնօրենը, հետևապես իր նկատմամբ կիրառելի չէ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվությունը, հիմնավոր

չէ, քանի որ վերոգրյալ գանձման որոշման մեջ հստակ նշված է, որ այն կայացվել է 11.12.2015թ-ի դրությամբ «Դեպի մեր հայրենիք» ՍՊԸ-ում չկատարված հարկային պարտավորությունների առկայության հետևանքով: Իսկ 11.12.2015թ-ի դրությամբ Գէորգ Օգնայեանը հանդիսացել է «Դեպի մեր հայրենիք» ՍՊԸ-ի տնօրենը:

Միևնույն ժամանակ, սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.02.2016թ-ի թիվ 315417/02 որոշումը կայացվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի պահանջների խախտմամբ: Այսպես, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն. «Վարչական տրույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի»:

Քննարկվող դեպքում ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 14.12.2015թ-ի հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին թիվ 2280/02 որոշման համաձայն 447.131 դրամի չափով չկատարված պարտավորություններն առաջացել են 2013թ-ի հունվար ամսից մինչև 2015թ-ի հոկտեմբեր ամիսների եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկներով, ինչպես նաև սոցիալական ապահովության վճարի գծով ներկայացվող 2012թ-ի 1-ից մինչև 4-րդ եռամսյակների հաշվարկներով: Այսինքն, վերջին խախտումը Գէորգ Օգնայեանի կողմից թույլ է տրվել 2015թ-ի հոկտեմբեր ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկում արտացոլված պարտավորությունները սահմանված ժամկետում չվճարելու համար, որի վճարման ժամկետը եղել է մինչև 2015թ-ի նոյեմբերի 20-ը: Բացի այդ, Որոշումը կայացվելու համար հիմք է հանդիսացել 11.12.2015թ-ի դրությամբ «Դեպի մեր հայրենիք» ՍՊԸ չկատարված հարկային պարտավորությունների առկայության հանգամանքը: Հետևապես, վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 315417/02 որոշումը կարող էր կայացվել մինչև 11.02.2016թ-ը, սակայն այն կայացվել է 29.02.2016թ-ին՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված երկամսյա ժամկետի խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ Գէորգ Օգնայեանի գանգառը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո ր ո շ ու մ է՝**

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.02.2016թ-ի թիվ 315417/02 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

**Հանձնաժողովի նախագահ՝**

